**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

13.04.2017թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 20-ի N 15-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի առաջատար մասնագետ Լիլիթ Քոչարյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Սասուն Խեչումյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյանի, մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Միեր Մելիքյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, բնապահպանության բաժնի պետ Արտակ Դեմիրչյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի և տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ Վահրամ Դանիելյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, մշակույթի, կրթության, առողջապահության, քաղաքաշինության, բնության և շրջակա միջավայրի պահպանության, ընդերքօգտագործման և տրանսպորտի ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

______________________________________________

______________________________________________

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մարգահովիտ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան ______________

Լիլիթ Քոչարյան ______________

Արտավազդ Բեջանյան ______________

Էդգար Հախվերդյան

Սասուն Խեչումյան

Սպարտակ Ղուքաթյան

Վալերի Ջաղինյան

Միեր Մելիքյան

Անահիտ Բարոյան

Արման Մխիթարյան

Գագիկ Հախինյան

Արտակ Դեմիրչյան

Սամվել Խառատյան

Վահրամ Դանիելյան

Համայնքի ղեկավար՝
Սամվել Անանյան